2021-2022 ուսումնական տարում Տավուշի մարզի 2-րդ դասարանում սովորողների ուսումնառության արդյունքների ոչ միավորային գնահատման՝ բնութագրերի ձևանմուշների վերաբերյալ

Նախաբան

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել է, որ 1–4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի 1-ին կիսամյակում իրականացվելու է ոչ միավորային գնահատում, իսկ սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգի համաձայն՝ յուրաքանչյուր սովորողի համար որպես կիսամյակի ամփոփում կազմվելու է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Տավուշի մարզի փորձարկող 2-րդ դասարանի ուսպլանով նախատեսված բոլոր առարկաների վերջնարդյունքների հիման վրա կազմվել են բնութագրերի հնգաստիճան սանդղակներ՝ որպես օգնություն ուսուցչին:

Յուրաքանչյուր աղյուսակի առաջին սյունակում տրված են տվյալ առարկայի ուսումնական ծրագրով սահմանված թեմաները (ԵԾԱ, Ծախմատ, Մաթեմատիկա և այլն) կամ առարկայական չափորոշչով նախատեսված հիմնական հասկացություններն ու ենթահասկացությունները (օր.՝ Մայրենի), իսկ աղյուսակի առաջին տողում ներկայացված են Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակները՝ ցույց տալով առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների կատարման աստիճանը 1-ին կիսամյակի համար՝ նվազման կարգով:

Ամեն առարկայի ուսուցիչ կարող է կազմել յուրաքանչյուր սովորողի բնութագիրը՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

- Պետք է շարժվել վերևից ներքև և հորիզոնական՝ գնալով ձախից աջ (Ա-Ե):

- Կարելի է ընտրել որևէ սյունակի նկարագրությունը ամբողջությամբ կամ համադրել հատվածներ տարբեր ձևակերպումներից, քանի որ նույն վերջնարդյունքի կատարման մակարդակների բաժանումը պայմանական է:
- Պետք է խուսափել մակարդակների բաժանել երեխաներին, քանի որ քիչ հավանական է, որ որևէ սովորող բոլոր վերջնարդյունքների մասով կապահովի նույն մակարդակը:
- Չի կարելի սյունակները համեմատել կամ նույնացնել միավորների (5-միավորային համակարգի կամ 10-միավորային համակարգի աստիճանների հետ):
- Բոլոր բնութագրերը կազմվել են դրական շեշտադրմամբ. պետք է բացառել «Չի կարողանում», «Չգիտի», «Դժվարանում է» արտահայտությունները:
- Ուսուցիչը կարող է ըստ անհրաժեշտության խմբագրել կամ լրամշակել ձևակերպումները՝ առավել հարմարեցնելով դրանք տվյալ սովորողի ցուցաբերած արդյունքին:
- Բնութագիրը պետք է կցել սովորողի անձնական գործին:

Ցուցումներ բնութագրերի կազմման վերաբերյալ

Ներկայացված աղյուսակների Ա սյունակում ներկայացված են առարկայի առաջին կիսամյակին ուսուցնավող թեմաների վերջնարդյունքները՝ ձևակերպված բնութագրի ձևով: Սյունակը ներկայացնում է վերջնարդյունքների ապահովման առավելագույն աստիճանը: Հաջորդ սյունակները ներկայացնում են յուրաքանչյուր վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները նվազման կարգով: Վերջին՝ Ե սյունակում ներկայացված է վերջնարդյունքի ապահովման նվազագույն աստիճանը:

Ուսուցիչը կարող է յուրաքանչյուր սյունակի բնութագրերին ծանոթանալով՝ ընտրել յուրաքանչյուր երեխայի համար այն ձևակերպումները, որոնք առավելապես համապատասխանում են նրա ուսումնառության արդյունքներին կիսամյակի ավարտին: Այս աշխատանքը կատարելիս ուսուցիչը պետք է հիմնվի ողջ կիսամյակի

ընթացքում կիրառած ձևավորող գնահատման արդյունքների (ստուգաթերթերի, համառող գրառումների, ռուբրիկների, դիտարկումների, հայտորոշիչ առաջադրանքների և այլ գործիքների պարբերական կիրառման վերլուծությունների վրա):

Բնութագրերը կարող են կազմվել տարբեր սյունակների բնութագրումներից ընտրված նկարագրություններից՝ ամբողջացնելով սովորողի ամփոփ բնութագիրը տվյալ առարկայից: Նույն տողից միայն մեկ բնութագրիչ կարող է ներառվել կոնկրետ սովորողի բնութագրի մեջ, քանի որ յուրաքանչյուր տողում նկարագրված են նույն վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները: Չի բացառվում, որ սյունակներից մեկի բնութագրումները լիովին համընկնեն կոնկրետ սովորողի առաջադիմության արդյունքներին, սակայն առավել հաճախ դա կլինի տարբեր սյունակներից առանձնացված բնութագրիչներից կազմված խճանկար:

«Երաժշտություն» առարկայի կիսամյակային ամփոփիչ բնութագրի ձևանմուշ

Կազմեց Գայանե Թադևոսյանը

Թեմաներ Թեմա **1**.	Ա	Բ	Գ	Դ	Ե
Երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը	Հաղորդակցվում և ինքնաարտահայտվում է ունկնդրվող նյութի միջոցով՝ ներկայացնում է իր տպավորությունները գրագետ, կապակցված խոսքով, դիմախաղով, մարմնի շարժումներով:	Ունկնդրումից ստացած իր տպավորությունները ներկայացնում է գրագետ, կապակց-ված խոսքով:	Ունկնդրումից ստացած իր տպավորությունները ներկայացնում է մի քանի բառով:	Ունկնդրումից ստացած իր տպավորու-թյունները ներկայացնում է միայն դեմքի արտահայ-տությամբ:	Ունկնդրում է, սակայն չի կարողանում ներկայացնել իր տպավորությունները:
	Հնչողությամբ ճանաչում է երաժշտության պարզ ժանրերը (տեսակները):	Հնչողությամբ ոչ միշտ է տարբերում երաժշտության երեք տեսակները:	Հնչողությամբ տարբերում է միայն երգը կամ պարը:	Հնչողությամբ տարբերում է միայն երգը:	Հնչողությամբ օգնությամբ է տարբերում երաժշտության երեք տեսակները:

	Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով ստեղծում է երաժշտական կեր-պար:	Արտահայտիչ երգեցողության միջոցով ստեղծում է երաժշտական կեր պար:	Երգեցողության միջոցով ստեղծում է երաժշտական կերպար:	Երգեցողության միջոցով փոր-ձում է ստեղծել երաժշտական կերպար:	Փորձում է երգել:
	Ստեղծում է երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն ռիթմական և «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:	Ստեղծում է երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն ռիթմական նվագարաններով:	Ստեղծում է երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:	Փորձում է ստեղծել երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն ձեռքերով, ոտքերով:	Փորձում է կատարել ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
	Երգում է (մենակ կամ խմբով) հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր մաքուր ինտոնացիայով, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայ-տիչ:	Երգում է (մենակ կամ խմբով) հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր մաքուր ինտոնացիայով, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ:	Երգում է (մենակ կամ խմբով) հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր, քայլերգեր ոչ միշտ ճիշտ ինտոնացիայով:	Երգում է (մենակ կամ խմբով) հայ ազգային պարզ մանկական երգեր, քայլերգեր հազվադեպ ճիշտ ինտոնացիայով:	Փորձում է երգել (մենակ կամ խմբով) պարզ մանկական երգեր:
	Մեկնաբանում է ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, տեմպը, դինամիկան, իր տպավորություններն ու զգացողությունները, ներկայացնում է	Մեկնաբանում է ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, տեմպը, դինամիկան, իր տպավորություններն ու զգացողությունները, ներկայացնում է նկարելով:	Մեկնաբանում է ստեղծագործության բնույթը, տեմպը, իր տպավորություններն ու զգացողությունները, ներկայացնում է գույներով:	Փորձում է մեկնաբանել ստեղծագործության բնույթը, տեմպը, իր տպավորություններն ու զգացողությունները, ներկայաց նում է գույներով:	Փորձում է նկարել երաժշտությունը:

	գույներով կամ նկարելով:				
	Դրսևորում է հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, հաճախում է համերգասրահներ, թանգարաններ:	Հետաքրքրվում է կենդանի կատարումներով, երբեմն հաճախում է համերգասրահներ, թանգարաններ:	Հազվադեպ է հետաքրքրվում կենդանի կատարումներով:	Փորձում է հետաքրքրվել դասերից դուրս հնչող երաժշ–տությամբ:	Հետաքրքրվում է երաժշտությամբ:
Թեմա 2. Ուր են տանում մեզ այդ ժանրերը	Հաղորդակցվում և ինքնարտահայտվում է ունկնդրվող նյութի միջոցով, կատարում է կերպարին համապատասխան նմանողական շարժումներ:	Հաղորդակցվում և ինքնարտահայտվում է ունկնդրվող նյութի միջոցով, նմանողական շարժումներ մասամբ է կարողանում կատարել:	Հաղորդակցվում և ինքնարտահայտվում է ունկնդրվող նյութի միջոցով, հազվադեպ է կատարում կերպարին համապատասխան նմանողական շարժումներ:	Հաղորդակցվում է ունկնդրվող նյութի միջոցով:	Հաղորդակցվում է ունկնդրվող նյութին:
	Արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով ստեղծում է երաժշտական կերպար:	Արտահայտիչ երգեցողության և դիմախաղի միջոցով ստեղծում է երաժշտական կերպար:	Երգեցողության և դիմախաղի միջոցով ստեղծում է երաժշտական կերպար:	Երգեցողության միջոցով փոր–ձում է ստեղծել երաժշտական կերպար:	Երգում է:
	Երգում է (մենակ կամ խմբով) ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ և ներկայացնում է հատվածներ հայկական	Երգում է (մենակ կամ խմբով) ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, ներկայացնում է հատվածներ հայկական և այլ մանկական օպերաներից:	Երգում է (մենակ կամ խմբով) ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, փորձում է ներկայացնել հատվածներ հայկական և այլ մանկական օպերաներից:	Փորձում է երգել ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, նաև հատվածներ մանկական օպերաներից:	Փորձում է երգել:

	և այլ մանկական օպերաներից:				
	Ընկալում, հասկանում է մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտում է հույզերով, պարելով կամ ռիթմական շարժումներով:	Ընկալում է մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտում է հույզերով, պարելով:	Հասկանում է մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտում է հույզերով կամ ռիթմական շարժումներով:	Փորձում է հասկանալ մեղեդու տրամադրությունը, բնույթը հազվադեպ արտահայտում է հույզերով:	Մեղեդու տրամադրությունը, բնույթը փորձում է արտահայտել մարմնի շարժումներով:
	Բնութագրում է ստեղծագործության իմաստը, սեփական զգացողությունները արտահայտում է գույների միջոցով կամ նկարելով: Բացատրում է իր և դասընկերների աշխատանքների լավ և վատ կողմերը:	Բնութագրում է ստեղծագործության իմաստը, սեփական զգացողությունները արտահայտում է գույների միջոցով կամ նկարելով: Փորձում է բացատրել իր և դասընկերների աշխատանքների լավ և վատ կողմերը:	Բնութագրում է ստեղծագործության իմաստը, սեփական զգացո-ղությունները արտահայտում է գույների միջոցով: Մասամբ է կարողանում բացատրել իր և դասընկերների աշխատանքների լավ և վատ կողմերը:	Փորձում է բնութագրել ստեղծագործության իմաստը, սեփական զգացողությունները արտահայտել գույների միջոցով կամ նկարելով:	Փորձում է սեփական զգացողությունները արտահայտել գույների միջոցով կամ նկարելով:
	Բացատրում է, թե համացանցն ինչպես է օգնում իրեն հաղորդակցվելու մանկական երաժշ-տական ստեղծա-գործություններին:	Գիտի, որ համացանցն օգնում է իրեն հաղորդակցվելու մանկական երաժշ-տական ստեղծա-գործություններին:	Փորձում է բացատրել, թե համացանցն ինչպես է օգնում իրեն հաղորդակցվելու մանկական երաժշտական ստեղծագործու-թյուններին:	Երբեմն կարողանում է ինքնուրույն մտքեր արտահայտել երաժշտական ստեղծագործու-թյան մասին:	Համացանցից օգտվում է օգնությամբ: